«Երևանի Ա.Դ.Սախարովի անվան հ.69

հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

«Երաժշտական թատրոն» Հեղինակային

ուսումնական խմբակի ծրագիր

1.Խմբակի նպատակն է՝

. ձևավորել գիտելիքներ երաժշտական թատրոնի վերաբերյալ

.ձևավորել և զարգացնել կերպարային և ստեղծագործական մտածողության կարողություններ

. ձևավորել երգող կերպարներ մարմնավորելու կարողություններ

.ուսուցանել մանկական օպերաներ և իրականացնել դրանց բեմական ցուցադրությունը

2. Խմբակի հիմնական խնդիրն է՝

.սովորողներին ծանոթացնել երաժշտական բեմարվեստի <<օպերա>> ժանրին՝ երեխաների մեջ ձևավորելով ստեղծագործական մտածողություն

3. Ակնկալվող վերջնարդյունքները՝

Սովորողը

. կճանաչի երաժշտական թատրոնի <<օպերա>> ժանրը

. կկարողանա մարմնավորել երգող կերպարներ, կփորձի իմպրովիզացիա անել կատարման ընթացքում

. կճանաչի հայ և օտարազգի այն կոմպոզիտորներին, ովքեր ստեղծագործել են երաժշտական թատրոնի ժանրում

4. Հատկացվող ընդհանուր ժամաքանակը

Շաբաթական՝ 1 դասաժամ

Տարեկան՝ 34 դասաժամ

5. Բովանդակությունը

1	Ծանոթացում խմբակի գործունեությանը, անդամներին։ Ծանոթացում երաժշտական թատրոնի ժանրերին։ Ունկնդրում	2ժ
2	Ճիշտ շնչառություն և ձայնարտաբերում. ձայնավարժություն	2ժ
3	Երաժշտության և թատրոնի փոխկապվածությունը, երաժշտական միտք։ Հատվածներ Արեգ Լուսինյանի մանկական օպերաներից, ֆրազաների վերլուծություն	2ժ
4	<<Ուլիկը>> և <<Երկինքը փուլ է գալիս>> մանկական օպերաների ունկնդրում, կերպարների վերլուծություն, դերաբաշխում	3ժ
5	Աշխատանք կերպարների մեղեդիական գծի վրա	3ժ
6	Աշխատանք մեղեդու ռիթմիկ պատկերի վրա	2ժ
7	Աշխատանք արտասանության վրա	2ժ
8	Դերերի միացյալ ընթերցում, խաղի զուգադրում	3ժ
9	Փորձ նվագակցությամբ, ստեղծագործության ամբողջացում	4ժ
10	Վարժություններ բեմական հմտությունների համար	2ժ
11	<<Ուլիկը>>- բեմական փորձ	2ժ
12	<<Երկինքը փուլ է գալիս>>- բեմական փորձ	3ժ
13	Ելույթի նախապատրաստում։	3ժ
14	Բեմական ներկայացում	1ժ